

82
3-16.

910

мс. 4.
лк. р-

ԱՄԵՐԻԿԱՆ ՊՐԵՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏՈՒԹԻՒՆ, ՄԵ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵ



Ն Ա Ր

Բ Ի Ն Ք Ե Ր Թ Ը Ն

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀՈՉՎԱԿԱՆՈՐ

ԳԻՂԵՏՆԻԱՄԱՇԻԿ ԼՆԻՆ

ՑՈՐ Ա ԿԱԺՆԵՐԸ

6. L.

ԹԱՐԳԱ. Ժ. 7.

ԹԻՒ 18

4. ՊՊԽԱ
CARVED TELLIAN - COM

ՆԻԱԿԱՐԱՅԻ ՄՐԵՆԹԱՑՆԵՐՈՒՆ ՄԵԶ



Մահուան հանդեպ իսկ Նաթ Բինքերթը ընին դեմքը անայլայլ
և անողոք էր:



ՆԱՌ ԲԻՆՔԵՐԹԸՆ

ՆԻԱԿԱՐ ԱՅԻ ՄՐԵՆԹԱՑՆԵՐՈՒՆ ՄԷԶ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԵՌԵԱԼԸ

Սեպտեմբերի ախուր և ցուրտ գիշեր մըն էր : Նիակարա
ծոս անուն փոքր քաղաքը, չինուած մօտն այն սրբնթաց-
ներուն(*), որոնք Ամերիկայի ամէնէն մեծափառ և ամէնէն
վեհ բնական տեսարաններէն մին կը նիրկայացնեն, խորին
հանգարտութեան մը մէջ խորտուզուած էր : Առեն տաեն
միայն գիշերային պատյանները կատարող ոստիկանի մը ուռ-
նաձայնը կը խանգարէր փողացներուն բացարձակ լուռ-
թիւնը :

Առոտան ժամը 1ին մօտ էր : Տարւոյն ալդ եղանակին
փշող գրեթէ հիւսիսային սառն հովը տուներու խում-
բերուն մէջն կը սուրար, երկնի մէջ ու ամպեր զիրար
հետապնդելով, լուսնին արծաթափայլ լոյօր հազիւ կընար
երբեմն անոնց մէջտեղէն թափանցնելով անցնիլ :

Տիրող բացարձակ լուռթիւնը չէր խանգարուեր շարու-
նակ լսուող ահսելի որոտումէ մը, որ քաղաքէն անդին,
հեռուն գաշտերուն մէջ իսկ կը լսուէր : « Ձրերու որոտումն»
էր այն, անուն մը զոր կուտան բնիկները նիակարայի(**)
ջրվէժներուն, — ահսելի մանջումը այն վիթխարի ջրակոյ-
տերաւն որոնք չորս հարիւր քսանըհինգ հուզար խորանարդ
մէթր ջուր կը թաւալեն մէկ վայրկեանի մէջ :

Բնակիչները վերջապէս վարժուած էին սրբնթացներուն

(*) Գետերու մէջ գտնուող նեղ անցքերը ուսկէց ջրերը ուելի
շուշու կը հսկին :

(**) Երիէ եւ 0նթարիօ լիճերուն միջիւ աշխարհի ունենամնք ջրը՝
վէժը :

և ջրվէժին խլացուցիչ աղմուկին . բայց , եթէ չէին հասկնար խսկ , այդպէս չէր պանդոկներուն մէջ բնակող օտարական ներուն համար , որոնք շատուոր չէին՝ եղանակին վերջաւորութիւնը մօտ ըլլալուն պատճառաւ :

Սրդ , գետին եղերքը հաստատուած ջրվէժներու պանդոկին երկրորդ յարկի միծ սենեկին մէջ այդ միջոցին կը բնակէր երիտասարդ մէթոտական (բողոքականին մէկ տեսակը) քարոզիչ մը , որ անկողին մտնելէն ի վեր աշխը զոցած չէր , թէ՛ ջրերու որոտման պատճառաւ և թէ չարչարուելով անոտոյդ բայց միծ անձկութենէ մը , որուն չարժառիթը ինքն ալ չէր իրնար հասկնալ :

Այդ քարոզիչը , որ կը կոչուէր թօպիաս Պիքսըն , նախընթաց օրն իսկ հասած էր Նիակարա Թօս , ընկերակցութեամբ Ալֆրէտ Պուտի անուն երիտասարդի մը , որ Նիւեօրքի մէջ հանրածանօթ միլիոնատէրի մը զաւակն էր : Միլիոնատէր Ջէրլ Պուտի իր որդույն զաստիարակութիւնը յանձնած էր թօպիաս Պիքսընի : Այդ միջոցին Ալֆրէտ 27 տարեկան էր , և դաստիարակը ուզած էր իր աշակերախն հաճոյք մը պատճառել , ցոյց տալով անոր Նիակարայի ջըրվէժներուն սքանչելի տեսարանը :

Այդ օրը , նախ և առաջ ոքանչացած Եին ամերիկան ջրվէժին վրայ , հիւսիսի կողմը . յետոյ զացած էին Կոդ Այլինտ , տեսնելու համար ձիու պայտի ձեւով անհուն ջրի անկումը հարաւի կողմէն : Հետեւեալ օրն ալ պիտի այցելէին գետին քանատական եղերքը , այդ վեհափառ տեսարանին բոլոր երեւոյթներն ալ վայելելու համար :

Թօպիաս Պիքսըն անկողին մէջ ասդին անդին դուռնաւով , չէր կրնար յաղթել զինքը նկողող անձկութեան : Իրեն հոգ պատճառելիք բան մը չաւնենալուն համար , իր սրանեղութիւնը կը վերապրէր ջրերուն աղմուկին , որ , զիշեր տեհն անուելի համեմտառութիւններ կ'առնէր չվարժուողի մը համար :

Վերջապէս , առաւուան ժամը մէկը զարնելու մօտ էր , չիրցաւ համբերել : Անկողինէն ելաւ , լոյսի ելեքտրական կոճակը զարձուց և հագուեցաւ : Յետոյ սկսաւ սենեկին մէջ պտակիլ , թէեւ առով ալ ո՞չ իր ջիղերը հանդարացան ոչ ալ զինքը չարչարող խուլ անձկութիւնը փարատեցաւ :

Այն առեն մատածեց երթալ քովի սենեկիը , տեսնելու համար թէ իր աշակերալ կը քնանա՞ր : Նրանցքն անցաւ և կամաց մը զարկաւ երիտասարդին դրան : Պատասխան չըստալուն , բացաւ զարմանալով թէ ի՞նչպէս Ալֆրէտ չէր կղպած զայն :

— Ալֆրէտ , արթո՞ւն էք , հարցուց :

Երիտասարդը չպատասխանեց :

Քարոզիչը , զոր սարսափելի նախազգացում մը կ'ունենար , ճաթբանցնելով լուցկի մը վասեց և ապշեցաւ , տեսնելով որ անկողինն աւրուած չէր և Ալֆրէտ սենեկին մէջ չէր զանուեր :

Այն առեն , խեղճ զաստիարակը ինկու մահացու սարսափի մը մէջ : Ալֆրէտ ս՞ւր կրնար ըլլալ արգեօք : Ինչո՞ւ երիտասարդը առանձին , զիշեր տակն մեկնած էր պանդոկին , առանց իմաց տալու Պիքսընի : Սա կը կարծէր յիշել և բիտասարդին նախընթաց օրն ըսելը թէ զիշեր տաեն լուսնի լուսով ջրերուն անկման տեսարանը սքանչելի ըլլալու էր : Թերեւ , վերջապէս , ուզած էր աեսնել զայն , և վախնալով որ իր զաստիարակը կը հակառակի , անոր իմացուցած չէր : Թօպիաս Պիքսըն կառչեցաւ այդ գաղափարին , ինչպէս որ ծովը ինկող մը կը փաթթուի փրկութեան տախտակի մը :

Արտորնօք իջաւ ոանգուխներէն . դոնապանը գեռ արթուն էր իր խցիկին մէջ :

— Հետո գանուող երիտասարդին պանդոկէն մեկնիլը տեսա՞ք , հարցուց Պիքսըն մեծ յուզմամբ :

— Այս՛ , պատասխանեց զոնապանը չարաճնի ժպիտով մը , կէս ժամէն աւելի է ... ըստ թէ լուսնի լուսով կ'ուզէ վիտել ջրվէժները և երբ զիտողութիւն ըրի թէ ամպերը շատ ըլլալուն համար լուսինը երբեմն հազիւ կը տեսնուէր , պատասխանեց թէ վիաս չանէր , ինքն ալ ջրերուն պիտի նայէր լուսինին աւեսնուած միջոցին :

Եւ զոնապանը ուսերը թոթուելով կրկին ժպիտի սկսըսաւ , իբր թէ հաստատուած ըլլար Նիակարայի ջրվէժներուն համար երիտասարդ Պուտի ունեցած զօրաւոր փափաքին մասին գոյացուցած կարծիքը : Այդ վարմունքը զարմանք պատճառեց Պիքսընի :

— Կարծեմ թէ զուք ալ ինձմէ աւելի բան մը չէք զիշեր , պնդեց զոնապանին ձեռքին մէջ դրամ մը սահեցնելով :

— Իրաւուր, պատասխանեց բարի մարդը, երիտասարդը ուրիշ բան չըսաւ ինծի, բայց կարծեմ թէ որընթաց ները ահանելու գացած չէ, և կամ գոնէ տանձին գացած չէ. իմ կարծիքովս աւելի՝ սիրային արկած մը պատճառ եղած է անոր մեկնումին, քանզի իր սենեակէն վար իջնելին քիչ առաջ, տեսայ բոլորովին սև հագուած և երեսր թանձր քողով մը ծածկած ափինոջ մը, անոր պատուհաններուն նայելով պանդոկին առջեր պարտիլը: Ի՞նչ ըսենք, մերջապէս երիտասարդութիւն է, այնպէս չէ^o, թերեւ երիտասարդը մը գնաց:

— Պա՛հ, ըսաւ քարոզիչը դժողոհ ձեւով մը, ըսածնիդ անհասկնալի բան է: Երիտասարդը ջովիչները գացած է, թողէք որ անցնիմ:

Դանապանը բացաւ գուոք ուսերը թօթուելավ: Իր կարծիքին վրայ հաստատ իր մնար: Պիքսըն մեկնեցաւ վազելով, մոռցած թէ զլուխը բաց և ոտքերը մաւճակով (թէրժամք) էր: Համոզուած էր թէ սիտի գանէք իր աշակերտը Փրոբէքդ Փառքի, ուր տեսարանը ամէնէն լաւն է:

Աւազուտ ճամբաներէն փութով անցաւ: Արչափ իր մօտենար գետին, դէպի անդունդը գանհապիժող սիհադին ջրակոյտերուն որոտումը աւելի սարսափելի կ'ըլլար: Վերջապէս Պիքսըն հասաւ, երկաթէ վանդակով մը շրջապատուած և անդունդին վրայ կախուած ժայռի մը դագաթը, ուր ջրերը կը կորսուին որոտումի խլացուցիչ աղմուկով մը:

Ճիշտ այդ վայրկեանին ամպերուն մէջն երեցաւ լուսինը, և երիտասարդ քարոզիչը, տեսարանին վեհութենէն զմայլած, քանի մը վայրկեան անշարժ մնաց, այդ երեւոյթին առջն ինչ մոռնալով... Բայց չուտ զաւ ինքնինքը և յիշեց իր աշակերտը զոր հոն գանել իր յուսար:

Ուր կրնար ըլլալ երիտասարդը...: Յոյս մը միայն ունէր Պիքսըն: Թերեւ Սլֆրէտ վերագարձած էր կօթ Այլէնտ, ջրվէժը դիտելու համար զանատական եզերքէն:

Արոշեց հոն երթալ վայրկեան մը իսկ չկորսնցուցած: Լուսինը կրկին ծածկուած էր տմօքերուն եռելը, խիստ մութ էր: Թօպիաս կը պատրաստուէր անցնելու դէպի կղզին տանող հարիւր տասը մէթը երկայն հռչակաւոր կամորջը, երբ աղմուկ մը լսեց և բնաղդաբար կեցաւ:

Աւազուտ ճամբաներուն վրայ ոտնաձայներ կը լսուէին:

Քարոզիչը կարծելով թէ Սլֆրէտն է մօտեցողը, զայն կանչելու համար բերանը բանալու վրայ էր, երբ տեսաւ քանի մը մարդոց իր քողը գալը:

— Ո՛հ, ո՛հ, մրմբաց թարթիչները քթթելով, կ'երեւի թէ աշակերտիս մասին գանապանին կարծիքը չխտակ էր: Արդեօք մեր պղտիկը ժամադրութիւնն մը ունէր...: Բայց, ոչ, կարելի բան չէ: այդ բանը մտքէս իսկ չեմ անցըներ:

Կամաց մը յառաջացաւ մինչեւ պատշգամին ծայրը, ուր հազիս հասած տեսաւ այլանդակ ձեւերով քանի մը ստուերաներ ջրերուն փայլուն մակերեսին վրայ: Այդ վայրկեանին, լուսինը վերերեւալով թեթեւակի լուսաւորեց տեսարանը, եւ քարոզիչը տեսաւ երեք հոգի, որոնց զէմքերը մինչեւ աչքերնին գոցուած էր խիստ թունձր սև քօղերով:

Այս մարդերէն երկուքը կը կրեին երկար ծրար մը զոր գետինը դրին, և Պիքսըն՝ սարուափով խառն զարմանքով մը նշարեց անոր մարդկային ձեւ մը ունենալը:

— Օ՛հ, ի զուր ժամավաճառ չըլլանք, մրմաց այդ մարդոցմէ մին, դիտէք թէ հոս կինալը վասանդաւոր է...: Եռն ոստիկանները ամէն ատենէ աւելի արթուն կը հսկեն հիմա:

Թօպիաս մինչեւ ոսկորներուն ծաւը սարսափած, լսութեամբ կը զիտէր այդ տեսարանը: Գիտէր թէ ժամանակէ մը ի վեր ոստիկանութիւնը շատ անգամներնիակարայէն հանած էր անսելի կերպով կտրուած զիտիներ, որոնց ժայռերուն վրայէն սրընթացներուն մէջ նետուած զգբազներ ուլանին կը հասկցուէր: Սարսափահար հարցուց իւրովի թէ արդեօք ինքն ալ նոր ոճիրի մը ականափե՞ս պիտի ըլլար, թէ արդեօք այդ գետինը պատկող և կապուած ու բերանը խցուած զգբազնն ալ իր աչքերուն տաչեւ ջաւրը չպի՞տի նետուէր:

Աւա՛զ, այդ հարցութերուն պատասխանը չուշացաւ:

— Յառա՛ջ, ըսաւ ոյն մարդը որ արդէն խօսած էր, բանեցէք ոս երիտասարդ ստուակը և նետեցէք անգամնին մէջ: Փութացէք, եթէ չէք ուզեր լսել ոստիկանական շուներուն հաշելու:

Մորդերէն մին քաշեց հանեց գետինը պառկած մարզուն վրայի ծածկոյթը, յետոյ, ընկերներուն օգնութեամբը վերցուց թշուառը, որ յաւահատական ճիգերով ի զուր կը շանուր իր կապերը քակել:

Այդ բոպէին լուսինը որ կը փայլեր իր ամրող պայծառութեամբը, լուսաւորեց գէծքը զժբաղդին։ Պիքսըն սարսափելի ճիչ մը արձակեց ճանչնալով իր աշակերտը որ զոհը եղած էր այդ մարդասպաններուն։

Քարոզիչը շատ քաջասիրտ մէկը չէր. բայց իր զգացած յուզման և սարսափին ազլեցութեանը տակ, արգիլելու համար ոճիրին գործադրութիւնը, առաջ նետուեցաւ պօսալով։

— Ալֆրէ'տ, Ալֆրէ'տ։

Բայց երիտասարդին բերանը իցուած ըլլալուն չէր կըրնար պատասխանել։ Թօպիասի տկանջները լսեցին քանի մը ահանելի հայնոյանքներ։ Մարգերէն մին, որ անշուշտ խըմբագետն էր, քարոզիչին վրայ պահառվ բռնեց անոր կոկորդէն, Պիքսըն աւազակներուն քովք գետ չասած։

— Շուն, պսուաց չարագործը, զան ալ քու Ալֆրէտիդ հետը պիտի երթաս. քեզի ալ պիտի նետեմ որընթացներուն մէջ։

Թօպիաս շատ թեթև հազուած էր, զէնք չունէր և հակասակորդը իրմէն զօրաւոր էր։ Բայց յուսահատութիւնը զերմարդկային ոյժ մը կուտար անոշ, ուստի յաջողեցաւ ինքինքը ազատել սրիկային ճեռքէն և դրկելով տարաւ մինչեւ պարաէզը, մինչդեռ բոլոր ոյժովն ալ օգնութիւն կը ուսուար։

Ցանէարծ գլխուն ստացաւ ահանելի հարուած մը որ թըմրիցուց զայն և թեւերը թուլցան։ Այն ատեն ակնարկ մը նետելով գէպի զետին վրայ երկնցած պատշտամը, տեսուածրագործներուն՝ Ալֆրէտ Պուտիի մարմինը տարուբերելնին և նետելնին փրկի ալից ջուրերուն մէջ, որոնց ալիքները քշեցին տարին գժբախտին ջարդուիչուր եղած գիտկը։

Այն ատեն վայրագ կատաղութեան նոոպայէ մը բռնուեցաւ քարոզիչը որ միշտ հանդարտ և խաղաղասէր էր։ Կատղած և զրգուած, անալով և լալով միհնոյն ատեն, վերստին նետուեցաւ իր հակոսակորդին կոկորդը, զետին պառկեցուց զայն և ոկտաւ բռունցքի հարուածներ տեղալ անոր գէմքին։ Բայց միւս երկուքը վերջացաւցած ըլլալով իրինց վատ գործը, վագեցին պետին օգնութեան, և անոնցմէ մին Թօպիասի գլխուն այնպիսի սարսափելի հարուած մ'իջեցուց որ մարեցաւ ինկաւ ան։

Անտարակոյս, ոճրագործները զայն ալ իր աշակերտին

պէս պիտի ընէին, եթէ անոնց մօտ ըոյսեր չփայլէին։ պարտէզին պահապանները և սատիկանները կը փութային հասնիլ հոն, ուսկից յսած էին ազողակներ և օգնութեան կոչչեր։ Թշուառականները յուտով կծիկը դրին, որով եկողները գտան միայն քարոզիչ Պիքսընը գետին տարածուած, աչքերը զոց և մեռելի պէս նուազած։



4. ՊՈՒԽ

MAHVED TELLIAN - Cons

“ՀՈՎԵՐՈՒ ՔԱՐԱՅՐԻՆ” ՄԷԶ ԱՐԿԱԾ ՄԸ

Հետեւեալ օրը ժամը 10ին միջացները քարոզիչ Թօպիաս Պիքսըն նիստարա ծասի ոստիկանտատն մէջ քննիչ մը ճէրսի կը պատմէր զիշերը պատահածները։ Նոյն զիշերն իսկ հեռազրած էին երիտասարդ Ալֆրէտ Պուտիի հօրը, որ պատասխանած էր թէ անմիջապէս մեկնելով պիտի համեմատ։

Քարոզիչը կը գողար ծեր հօր զիմացը զանուելու մտածումէն։ Թօպիաս շատ խղճամբաւ և պարտածանաչ մէկն էր, թէպէտ ինքզինքը ամեննելին յանցաւոր չէր զաներ երիտասարդին մահուածնը համար, բայց պատասխանտառ նկատելով ինքինքը՝ զան յանդիմանութիւններ կ'ուզդէր իր անձին։ Այնչափ գժբախտ էր, իր յուսահատութիւնը այնչափ մէծ էր որ մինչեւ իսկ պիտի նետուէր որընթացներու մէջ, իր անբաղդ աշակերտին վիճակից ըլլալու համար։

Վնիչ միքջը գթալով իսկո՞ մարզուն վրայ, փորձեց զայն միթիթարել և քիչ մը քաջալերել։

Աստիկանութիւնը սկսած էր արդէն մանրակրկիտ խուզարկութեանց, Փառափիքթ Բարքի մէջ Թօպիասը նոււղեալ գտած վայրկեանէն ի վեր, բայց տակաւին չէր յաջողած գտնելու ո և է հետք ոճրագործները ձերքակալելու համար։ Թշուառականները աներեւութացած էին, որով կարելի չէր ըլլար հետք մը զանել կամուրջին մօտ գտնուած կօշիկներուն չնչին նշաններէն։

երիտասարդ Պուտիխն դիակը չեխն գտած, ինչ որ արտակարգ բան մը չէր: Ենու քանի որ պէտք մըն էր դիակին ջրին երեսը ելլելու համար:

Աթճըրը հեռաձայնով օգնութիւն խնդրած էր Պրֆֆալօ քաղաքէն, ուսկից եկած էին ապահովութեան քանի մը պաշտօնեաներ և ձեռք տած էին գործը, թէւ անսովուաթինութիւնը քայլ մը խոկ չէր յառաջանար. կը գանուելին առեղծուածի մը առջեւ, որուն լուծումն անկարելի է՝ երեսէր:

Յորեկին քիչ վերջը քարոզիչը կրկին մնաց ոստիկանաւտուն: Հազիւ տառը վայրկեանէ ի վեր քննիչ Խըճըրսի քով կը գտնուէր, երբ՝ սպաննուած երիտասարդին հայրը Չորլս Պուտի ներս մտաւ, տարիներու բհանն տակ կը քած աղնուականի մը հետ, որուն մազերն ու մօրուքը ձիւնի պէս ձերմակ էին:

Պուտի, որուն սիրտը վիշտէն բոլորովին խորտակուած էր թէեւ, բայց յանդիմանութեան ոչ մէկ խօսք ուզդեց իր որդւոյն դաստիարակին: Անոր նայեցաւ երկարօքէն, տրտմաւից աչքերով, մինչդեռ Պատուելին, բննիով թշուառ հօր ձեռքը, դառնութեամբ կուլար և հեծկլտանօք կը պատմէր եղելութիւնը: Միլիոնատէրը բազկաթոսի մը մէջ կը քած, խոշոր արցունքներ վար կը վազէին անոր ակօսացած այտերէն: Արդին, իր միակ զաւակը, ամուրիի տիսուր կեանքին միմիթարութիւնը, իր ուրախութիւնն ու հաղորդութիւնը: կը կորմնցնէր այսովէս վատ մարդասպանութեամբ մը, երբ կը կարծէր թէ սո ողջ ասազջ ըլլալով, կը վայելէր իրին սպասող երջանկութիւնը... Ա՛ն, ի՞նչ դժբաղդ վիճակ...:

Երբ Պիքուըն վերջացուց իր հեծկլտանքներով շարունակ ընդմիջուած ած ցաւալի պատմութիւնը, որուն վրայ քանի մը լրացուցիչ մանրամանութիւններ աւելցուց քննիչ Խիճըրս, վայրկեան մը լուռութիւն տիրեց: Չարլս Պուտիի հետ եկած ծեր աղնուականը, զբանինեամին պատուեանին կրթնած, մեծ ուշագրութեամբ և առանց բան մը արտասանելու մտիկ ըրած էր Թօպիտի խօսքերը:

Պիքուն խօսքը անոր ուզդելով հարցուց իր անունը, նոյնպէս ըրաւ նաև քննիչ Խըճըրս, ներողութիւն խնդրելով աւելի առաջ կատարած չըլլալուն համար այդ ձեւակերպութիւնը, գժբախու հօրը տնոքէն առաջին վայրկեանին շատ

յաւզուուծ ըլլալուն համար: Բայց ի մեծ զարմացում քննիչն, ծերունին գլխի թեթև նշոն մը ըրաւ, և չփութալով ինքինքը ներկայացնել, սկսաւ հարցաքննել զայն:

— Անգաղանապահութիւնէ վախնալիք տեղ մըն է հոս, հարցուց:

— Ամենեւին, պատասխանեց Աթճըրս նեղորտութեամբ, հոս կրնանք բնել խիստ զաղանի հաւաքումներ և ծածուկ տեսակցութիւններ:

— Լաւ, ըստ ծերունին, որ ոտքի ելաւ խոկայն, և որուն ազգեցիկ հասակը մեծ ապաւորութիւն գործեց երկու ապշած մարդոց վրայ: Ուրեմն պիտի իմացնեմ ձեղի իմ բուն անունս, Քազմնի ոստիկան եմ և կը կոչուիմ նախ Բինքէրթըն, նիւեօրքէն:

— Նախ Բինքէրթըն, պուացին միաբերան Պիքուն և Աթճըրս:

— Եւ քննիչը ունածանօք բարեւեց հոչակաւոր ոստիկանը և ձեռքերն երկնցուց անոր:

— Ի՞նչ երջանկութիւն, ըստ, մինչդեռ Պիքուն ալ իր երջանկութիւնը կը յայտնէր՝ զաղանի ոստիկանը այս զործն իր վրայ տած ըլլալուն համար: Հիմա կը յուսամ թէ ոճարզործները չուուով պիտի ձերբակալուին:

— Կրցածն պիտի ընեմ, պատասխանեց Բինքէրթըն, բայց ամենամեծ զաղանապահութիւնն կը խնդրիմ ձեզմէ: Հոս ճանշալու չեն զիս, և Պ. Պուտի ամէն տեղ պիտի ներկայացնէ զիս իբրև իր բարեկամը՝ Պ. Ուիլեէմ Մէքըն անուամբ...: Արդ, զբաղինք մեր գործովք: Շիսա՞կ է որ վերջին ժամանակները այս տեսակ չուտ մը զէպքեր պատհած են:

— Այս, ըստ Աթճըրս, և ամէնքն ալ խորհրդաւոր մընացին: Վեց ամիսէ ի վեր ներկարայի մէջ նետուող հինգնորդ զան է Ալֆրէտ Պուտի:

— Գետէն հանուած կամ ջրերուն եղերքը նետուած դիակները միշտ կազոպատուած են:

— Միշտ: Սպաննուածներուն վրայ երբեք չդանուեցաւ ոչ գոհարեցէն, ոչ զրամ եւ ոչ արժեթաւողթէր:

— Եւ սպաննուածները հարուստ անձեր են:

— Ներողութիւն, հարուստ թէազքատ, չարադրենք ամէնքն ալ կը սպաննեն: Առաջինը Պլքֆֆալոցի Աէմ Պրո-

ուն, խոշոր գործարանատէր մըն էր, որուն հարստութիւնը միլիոններու կը համնէր: Անկից ետքինը, Նիսկարա Թօս-ցի, Ֆէթէր Տօնալու անուն տմնաաղքատ մէկն էր, և սակայն անոր բոլոր գրպաններն ալ գարձուած ու խուզար-կուած էին գետէն հանուած ատեն: Երբորդն էր Պըֆֆա-լոցի միջակ վաճառական մը, իսկ չորրորդին ո՛վ ըլլալը կա-րելի չեղաւ համենալ, կատարելապէս անձանաչելի եղած էր, սակայն գասակով իր ճերմակեղենին և հազուստէն, բարեկեցիկ գասակարգէ կ'երեւէր:

— Հըմ, բառ Բինքէրթըն, կամաց մը շարժելով գր-լուխը, անաւասիկ աարօրինակ բան մը: Կարծես թէ շա-րագործները իրենց ոճիքները զողութեան համար գործուած ցոյց տալ ուզած են, քանի որ ամենէն աղքատ զոհերուն ալ գրպանները խուզարկեր են: Բայ իս, կարծեմ թէ ուրիշ պատճառներ կան:

Թրճրս չկրցաւ ինքզինքը զսպել ուսերը թօթուելէ:

— Եթէ այդ է ձեր կարծիքը, բառ սատիկանին, զործը կ'ստանայ ամենաղդուար և խառնակ հանգամանք մը:

— Կամ թէ աւելի յատակ, պատասխանեց Բինքէրթըն շարաճճիօրէն ժայռելով: Ինչ որ ալ ըլլալ, տակաւին տուած ու է որոշում, և խոսքը ուզզելով երիտասարդ քարոզին:

— Պ. Պիքսըն, բառ, շահագրգութեամբ մտիկ ըրի այս զիշերուան եղելութեան մտսին ձեր ըրած պատճառ-թիւնը: Վասահ էք, այնպէս չէ՞ և խիստ վստահ, թէ երի-տասարդ Պուտիի մարդասպաններուն երեար զոցուած էր սեւ թանձր քողով մը:

— Խիստ վստահ, պատասխանեց Պիքսըն:

— Շնորհակալ եմ: Կրցա՞ք նաև տեսնել թէ պարտէ-պին մէջ ասդին անդին կեցած և այդ սրիկաններուն մեղսա-կից ուրիշ մարդիկ ալ կայի՞ն:

— Աստուած իմ, բառ երիտասարդ քարոզիչը, կը խոստավանիմ թէ յուզումս ա՛յնչափ մեծ էր որ արտ տեսակ բաններով չկրցաց զրադիլ:

— Լա՛ւ, լա՛ւ, կը համենամ... բայց իմ մտսիս հա-մոզուած եմ թէ մարդասպանները պահնորդներ զնելը մոռ-ցած չեն: Հիմա ուրիշ բան: Կ'ըսէք թէ չէք յուսար որ ե-րիտասարդ Ալֆրէտ ժամագրութիւն տուած ըլլայ: Կարծե-ցիք թէ պանդոկին գանապանը կը կատակէր մըր բառ ձեզի

թէ տիկին մը կը պատկէր երիտասարդին պատուհաններուն առջևու:

— Այո՛, բառ երիտասարդ քարոզիչը կարմրելով գըու-նապանին այդ կարծիքը ցամամամը մերժեցի: Աշակերտիս բնաւորութեանը մէջ չեմ նշմարած երբեք այդ տեսակ հա-կում մը: Արդէն չունէր տակաւին սիրային արկածներու մէջ գոնուելու տարիքը... հազիւ կար տասնըօթք տա-րեկան:

— Անկից բան մը չելեր, բառ սստիկանը: Սիրուհի-ներ ունեցող երիտասարդները ամէնուն մուսնետիկ չեն կան-չեր, և հազուագիւա է որ իբրև մտերիմ ընտրեն իբենց դաստիարակները: Ճատ կարելի է որ ձեր տակերաք Նիւ Եօրքի մէջ իսկ ունեցած ըլլայ յարաբերութիւն մը և զուք նշմարած ըլլաք զայն:

— Բայց կը ինպքիմ..., ևս անոր կեանքին ամէն պա-րագաններուն տեղեակ եմ:

— Լա՛ւ... բայց զիշեր ցերեկ անոր հետն եղած չէք, այնպէս չէ՞:

— Ծիտակ է, բառ երիտասարդ զաստիարակը շփու-թած դէմքով մը, Ալֆրէտ չատ անգամներ կը մնար առան-ձին, բայց ժամանակը կ'անցընէր պարզ գրօնանքներով:

— Տեսա՞ք, հետեւաբար ամենեւին չեմ մերժեր պան-դոկին գրնապանին կարծիքը, ընդհակառակը իմ հետախու-զութեանս մեկնակէտը պիտի ընեմ այդ ենթագրութիւնը

Հայր Պուտի, որ քիչ մը հանգարտած և արցունքները սրբած էր, աշազգրութեամբ մտիկ կ'ընէր զալանի սստիկա-նին ըսածները: Ատքի ելաւ, բանց Բինքէրթընի ձեռքը և ակնարկն ուղղելով սստիկանին ուզզամիտ և խելացի աչ-քերուն, գողգոջուն ձայնով մը ըսաւ:

— Ասէք խեղճ զաւկիս գրէմքը: Չանացէք որ մարդաս-պանները չկրնան խուսափի այլեւս իրենց արժանի պատի-մէն, անհունս երախտապարտ պիտի մնամ ձեզի:

— Վստահութիւն ունեցէք Պ. Բինքէրթընի վրայ, բառ քննիչ Ռըցըրս: Այս տխուր զործը յուսաւորելիք մարգն է աս: Եթէ ինքը չգտնէ ոճրագործները, ուրիշ ոչ ոք պիտի կը ըսայ ձերբակալել զանոնք:

Ծերունին ինկաւ իր բազկաթուուին մէջ: Բինքէրթըն ա-թոռ մը անելով զնաց նստաւ քովը:

= 12 =

— Ամերկ բրէք Պ. Պուտի, ըսաւ քաղցր ձայնով մը, ձեզի ընելիք քանի մը խիստ կարեւոր հարցումներ ունիմ, և կ'աղաչեմ որ պատասխանէք անկեղծարար, առանց դարձուածքի և առանց յետին մտքի:

— Հարցուցէք, բոլոր պիտիցած պիտի ըսեմ, պատասխանեց Պուտի:

— Շատ լաւ, շարունակեց Բինքէրթըն: Ցեսնենք, Կը ճանչնաք մէկը որ շահ մը ունենայ ձեր որդւոյն մեռնելին:

Պուտի խոշոր խացու բացաւ իր զարմացած աչքիրը:

— Ոչ, այդ տեսակ մէկը չեմ ճանչնար, ըսաւ:

— Ո՞չ ոք, Պ. Պուտի, բացարձակապէս ո՞չ ոք: Վըստա՞հ էք: Նիւ Եօրքէն հսու եկած ատհննիս ձեր բնտանիքի մասին խօսեցաք ինձի: Էսիք թէ ութը տարիէ ի վեր մեռած ձեր կնոջ ձեզի տուած միակ զաւակն է Ալֆրէտ: Հետեարար, ձեր միակ ժառանգորդն էր ան...: Քանի որ դժբաղգաբար այլես չկայ ան, ո՞գ է որ ձեր մահն յետոյ պիտի ժառանգէ ձեր հարստութիւնը:

Պուտի չեր կարող գուշակել թէ ի՞նչ ըսել կ'ուզէր ոստիկանը, քովբնուի կրնայէր, կարծիս թէ վախցած ըլլար անոր որոշ և յատակ փաստերէն:

— Հարստութեանս մեծագոյն մասը Խոչէսթըր բնակող Հանրի եղբայրս պիտի առնէ, ըսաւ վերջապէս:

— Խաթ Բինքէրթըն վայրկեան մը լուելով խորհրդածելու երեսյթ մը պատ:

— Խոչէսթըր ասկից հեռու չէ, ըսաւ ինքնիրեն: Պուտիմ ըսել ձեզի, Պ. Պուտի, շարունակեց բարձր ձայնով, թերեւս տարօրինակ պիտի երեի ձեզի, Խոչէսթըր բնակող ձեր եղբայրը՝ Պ. Հանրի Պուտին ես կը նկատիմ իրին շահ ունեցող ձեր ինեղն որդւոյն մեռնելին:

Զարլս Պուտի օձէ խայթուած մէկու մը պէս ոստում մը բրաւ:

— Կարծեմ թէ րուել չեք ուզեր որ եղբայրս ըլլայ այդ զգուելի ոմիւնն գրգիչը:

— Աստուած ընէ, պատասխանեց ոստիկանը, մտքէս այդ տեսակ բան վանցուցած չունիմ, և արգէն, երբէք չեմ ամբասաներ մէկը, անոր յանցաւորութեանը մասին անհերքէի տպացոյցներ չունեցած:

— Աւրեմն խորհուրդ կուտամ ձեզի որ եղբայրս բոլո-

րովին դուրս ձգէք այս գործէն...: Ոչ մէկ կասկածի առարկայ ըլլարու է ան, շատ հարուստ է և իմ հարստութիւնս ափ մը պտուղի արժէքն ունի միայն անոր համար: Թէպէս անոր հետ սիրով չեմ և տարիներէ ի վեր զիրար չինք տեսած, բայց չպիտի հանգուրժեմ...

— Ձեր թույլտուութիւնը կարեւորութիւն չունի, ըսաւ Բինքէրթըն բաւական կծու շնչառվ մը: Քանի որ այս դործը վրաս առած եմ, պէտք է մինչեւ ծայրը տանիմ: Միանգամ ընդլիշտ պէտք է ձեռք անցընել այդ զաղաներուն վոնմակը, երբէք անհոգ չպիտի գտնուեիմ դէպի այն ամէն բաները որոնք նպատակիս պիտի հացնեն զիս: Ահա այդ պատճտուած սահիպուած եմ խնգրէն գուրս չթօղուլ ձեր եղբայրը, բայց հաւատացէք որ ասիիա ըսել չէ թէ ան յանցաւոր է:

Պուտի կը խոստավանէր ինքնիրեն թէ զաղանի ոստիւ իանը իրաւունք ունէր: Պատասխան չտուաւ, ծոհց գլուխը և սկսաւ առատ արցունք թափիել:

— Ո՞վ տուաւ ձեզի ձեր աշակերտին հետ որբնթացները գալ տհոնելու զաղափարը, հարցուց Բինքէրթըն քարզիչին:

— Եոյնինքն Ալֆրէտ, պատասխանեց Պիքսըն: Արդէն տեսած էր Նիւկարայի ջրիէթը քանի մը տորի առաջ, բայց այնքան յաճախ մեծ փափոք յայտնաց անգամ մըն ալ սքանչանուլ այդ մեծափառ տեսարանին վրայ, որ վերջապէս Պ. Պուտի թույլտուութիւն ըրաւ իմ հետս հսու զալուն:

— Ա՛հ, ա՛հ, ըրաւ Բինքէրթըն, որուն յօնքերը կծուեցան խորհրդածութեան ազգեցութեանը տակ: Ներողութիւնիդ խնդրելով կը հարցնեմ ձեզ, Պ. Պիքսըն, թէ արդիօք ձեց բնկիրակցութիւնը հածելի՞ էր շատ երիտուարդ Ալֆրէտին:

— Շիտակը խօսելով, շատ ալ զո՞ւ մնալու երեւոյթը չունէր ան, պատասխանեց քարզիչը:

— Այս՛, ընդմիջնեց Զարլս Պուտի դողդոջուն ձայնով մը, որդիս խնդրած էր ինձմէ առանձին՝ ընել այս փոքր ճամբորդութիւնը, խոստանալով երկու օրէն վերապանալ, բայց ես չընդունեցի:

Կ'երեւի թէ ոստիկանը շտացաւ այս աեզեկութեամբ և վերջացուց հարցաքննութիւնը: Զատուեցաւ Պ. Պուտիէն

ու գնաց բնակելու քաղքին ներսերը, պանդոկի մը մէջ, մինչդեռ ինքը, զաղտնի ոստիկանը, Պիքորնի սենեակին մօտ սենեակ մը կը վարձէր Զրէժմէրու Պանդոկին մէջ:

Անմիջապէս ետքը, Բինքէրթըն, որ չէր փոխած իր ծեր ազնուականի երեւոյթը, գնաց ոճրին վայրը, կը վալէր կամաց և կրթնած խոշոր գաւաղանի մը վրայ, տեսնելով անոր դժուարութեամբ յառաջանալը, և ոչ ոք պիտի կասկածէր թէ ան կորովի և իր ամէնէն գօրաւոր տարիքին մէջ էր:

Երբ հասաւ կլոր կէտր, որ կ'իշխէ ջրվէժին վրայ, ուշագրութեամբ քննեց գետինը, բայց նախընթաց օրէն ի վեր այնչափ շրջագայողներ, հետաքրքիրներ, ոստիկաններ եւ այլ Աստանովութեան պաշտօնեաններ անցած էին հոնկից եւ կոխած գետինը, որ ոճրագործներուն հետքն աւրուած էր:

Պատշգամին բարձրէն Բինքէրթըն կը դիտէր անոելի անդունզը որուն մէջ նետած էին խեղճ Ալֆրէտ Պուտին: Խսքնիրեն կը հարցնէր թէ ի՞նչ կերպով պիտի կրնար հասնիլ իր նպատակին:

Ասածին մտածումը կեղրսնացաւ այդ քօղաւոր սեեր հաղած կնոջ վրայ, որուն, Ալֆրէտի սենեակին պատուհաններուն առջեւ չարունակ վեր նայելով պտակիլը տեսած էր Զրվէժներու Պանդոկին գոնազանը:

Գաղտնի ոստիկանը վարպետութեամբ մը հարցագննած էր զոնապանը և անոր ձեռքին մէջ զրամական նուէր մը սահեցնելով դիտցածը խօսիլ տուած էր, բայց չկրցաւ իմանալ նոր բան մը: Այդ մարզը կրկնեց երիտասարդ քարոզիչն ըստածները, աւելցնելով միայն թէ այդ կնոջ հասակը միջակէն քիչ մը բարձր և խնամով քօղարկեալ և այնչափ լաւ գոցած էր դէմքը որ կարելի չէր որոշել աչքերու զոյն իսկ: Այս քանի մը մանրամասնութիւններէն զատ բան մը չէր դիտեր:

Նաթ Բինքէրթըն, շուրջի տեսարանին զանազան երեւոյթները դիտելու համար ձախ կողմը զանալուն, նշմարեց կօթ Սլյէնտ տանող կամուրջին վրայցեղեցկատեսիլ հասակով կին մը, որ բաց կազյա վայելուչ հագուստ մը հագած եւ գլուխն ալ փետրաւոր լայն գլխարկ մը զրած էր: Շուտ կը քալէր, կղզին համսելուն՝ գիմեց դէպի այն խանութը ուր կը դանուին առաջնորդներ և անթափանցելի հագուստներ, իջնելու համար Հօգիրու Քարայրը կոչուող տեղը որ տեսակ մը խոռոչ է, զոր տեսնել կ'երթան զբոսարջիկները:

— Ճե՛ս, տե՛ս, ըստ ինքնիրեն Բինքէրթըն, գրեթէ ակամաց:

Առաւ դիտակը և սկսաւ դիտել կինը: Իրեն չատ գեղեցիկ երեցաւ և որովհետեւ որոշած էր ջրվէժներուն տեղը իր պատահելիք այդ տեսակ բոլոր կիներով ալ զրադի, իսկոյն գրանը դրաւ դիտակը, գրեթէ վաղելով զնաց դէպի կամուրջ որ պանդոկէն չատ հեռու չէր: Կ'ուղէր կղզին երթալ և միանալ անծանօթուհին:

Հասաւ այն վայրկեանին երբ ան կը մտնէր Հօգիրու Քարայրին, խանութը, որով կը հասկցուէր թէ անդունզը այցելելու դիտաւորութիւն ունէր:

Գաղտնի ոստիկանը փութով մտաւ խանութէն ներս, կինը տակաւին չելած դուրս իր տաշնորդին հետ: Տօլար մը վճարելով հագաւ անթափանցելի հագուստներ և հետեւցաւ առաջնորդին ու տիկնոջ:

Իրեն այնպէս երեւցաւ թէ գեղեցիկ անծանօթուհին կարմրեցաւ երբ ինքն ալ մտաւ նոյն խանութը և գէմքը թթուեցուց քիչ մը, որմէ կը հասկցուէր թէ անոր տհաձութիւն կը պատճառէր մէկու մը իրեն հետեւիլը: Այս պարագան հոգ չըրաւ ոստիկանը, որ շարունակեց զայն դիտելը: Մօտին նայուելով կը հասկցուէր կնոջ բուն տարիքը որ քառասունի կը մտնենար, բայց յայտնապէս կը տեսնուէր թէ մեծ տաղանդ մ'ունէր սիր տարիքը փոքր ցայց տալուն մէջ, որով անտարակոյս խեղճ Ալֆրէտ Պուտին նման անփարձ երիտասարդ մը կրնար բոլորովին խարսիլ և իջնալ այդ տեսակ պչըռուհի մը ցանցին մէջ: Գաղտնի ոստիկանը բաղդատարար կ'ընէր այդ խորհրդածութիւնը, չզիտնալով ամենեւին թէ այդ կինը ունէ՞ր կամ չունէր ուեէ գեր սպաննութեան մէջ, իբր առաջնորդ ունենալով միայն այն վեցերորդ զգայարանքը որ այդ արհեստին մարդոց ոյժն է:

Նոյնպէս տսկնոջ առաջնորդը՝ ծեր անծանօթին ընկերակցութենէն չատ գոհ մնալու երեւոյթ չունէր: Այդ առաջնորդը երկայնահասակ, յաղթանդամ և ուժեղ կազմուածքով, մօրուքը անինամ, վայրագ, խարերայ և անգութ աչքերով մէկն էր: Իր վրայ չկար ոչինչ վատահութիւն ներշնչելիք, այլ ընդհակառակն էր: Բինքէրթըն կարծեց նշմարել թէ ծածուկ նշաններ կը փոխանակէր տիկնոջը հետ:

— Կրնամ սխալիլ, ըստ ինքնիրեն, բայց կարծեմ թէ լաւ հետքի վրայ եմ... ամէն պարագայի մէջ աչքես կորմնցնել չեմ ուզեր այս չի և կասկածելի զոյդը. ուս անպատանին խիղճը բեռնաւորուած պիտի բլայ:

Առաջնորդն ու երկու զրօսաշրջիկները բանեցին «Հովերու Քարայրին» ճամրան: Այս անունը կուտան այն տարածութեան, որ կայ անապող ահագին ջրակոյտին և ժայնին միջև, որուն վրայէն կ'անցնին ալիքները՝ անգունդին մէջ թափելու համար: Պողպատէ ջիզեր ունենալու է այդ տես մտնել համարձակելու համար, քանզի ջուրիրուն և հովին մոնչիւններն այսօքէս են որ հան մտնողը կը կարծէ թէ ամբողջ կեանքին մէջ կոյք և խուլ պիտի մնայ, չնաշուելով գողացող գետնին տատանումները որոնք սարսափելի ջղատամ մը կը պատճառն:

Ցից սանդուխով մը կ'իջնուէ մինչեւ ժայռերուն սուռուը, ջրվէժներուն քովիկը: Պատողները իջան հոդ, անցան արահետներէ և կամուրջներէ սրոնք կան ժայռերուն և ջրվէժին փաշիի պէս նուրը կաթիւներուն միջեւ և հասան վերջապէս հտեր ջրի պատին, ոժգոյն կանանչ, որ դրիթէ ուզիդ կ'իջնալ անդունդին մէջ:

Հան, պէտք էր անցնիլ ժայռէ մը, որուն խիստ նեղ ծայրը կօխելով մէկ հոգի միայն կրնար անցնիլ: Այն ատեն զրօսաշրջիկը պարախ երեսը գարձնել ժայռոտ կողմը, երբ իր նորին կը մնայ անդունդը, ուր անվերջ կը թափի վիթխարի ջրակոյտը, որուումի ողմաւկով մը:

Երեք ճամբարդները զգուշութեամբ անցնելով այդ վրտանգուոր տեղին, հասան վերջապէս տւելի լայն ճամբու մը վրայ: Հակառակ իր ճանր մտահոգումներուն, Նաթ Բինքը թիթըն կեցաւ այդ մեծափառ տեսարանին առջեւ և ընկղմեցաւ քանի մը վայրկեան լուս սաքնչաղման մը մէջ:

Առաջնորդը և կինը շարունակեցին ճամբանին և կիցան իրենց կարգին քանի մը քայլ անդին: Գաղտնի ոստիկանը, որուն յուզումը չուտ անցած էր, մէկդի թողածիր արուեստագիտական զզացումները. ձեւացնելով նայիլ վանդակին վրայէն որուն կրթնած էր, զոյդը չէր կորսնցներ աչքերէն:

Մարդն ու կինը բանուած էին խօսակցութեան մը, որ իր մասին պիտի ըլլար, գէթ Բինքը թիթընի կարծիքով, քանդի մէկ բան մը խէլ չէր լսեր ջրերուն խլացուցիչ աղ-

մուկին պատճառով: Խորհեցաւ թէ այդ մարդիկը տեսած էին իր նիսկարար ծօլս գալը Զարլզ Պուտիի հետ և թէ զինքը լրտես մը կը կարծէին:

— Ազէ՛կ, ըստ ինքնիրեն, պէտք չէ որ հաճելի բան մը սպասեմ անոնց կողմէ: Լաւ պիտի ընեմ եթէ զգոյչ կենամ:

Ատրճանակը առաւ և կամաց կամաց ուղղուեցաւ դէպի զոյգը, երբ կինը, թղթապանսկէն քանի մը պանքտում կը հանէր, զոր երկնցուց առաջնորդին:

Այս վերջինը կասկածու ակնարկով մը իրեն ցոյց տուաւ մօտեցող օտարականը: Այս ատեն կինը անմիջապէս գրամաք դրաւ թղթապանակը, մինչ առաջնորդը, մատներուն մըջն ձմբթկելէ ետք գոտիին մէջ կը խօթէր պանքտումները: Յետոյ, երբ Բինքը թիթըն իրենց մօտ եկաւ, առաջնորդը սիրալիր դէմք մը առաւ ու ոկուաւ շաղակրատել, խօսքը զրօսաշըրջիկն ուղղելով.

— Այս անկումը, ըստ քիթին մէջէն խօսելով, այս անկումը, որ ամերիկեան անկում կը կոչուի, ունի իր 330 մէդը լայնութիւն մը և 47 մէդը բարձրութիւն մը...:

— Ազէ՛կ, ազէ՛կ, ընդմիջն Բինքը թիթըն անհամբերութեան շարժաւմ մը ընելով: Ատենց ամէնը գիտեմ: Եւ արդէն պիտի չկրնամ այդ տեղեկութիւններուն համար նոյնչափ սուղ գին մը վճարել որչափ վճարեց այս կինը:

Առաջնորդը և կինը ուարուացին և սպառնալից ակնարկ մը ձգեցին ծերունիին վրայ: Յետոյ պահ մը իրարու երես նայեցան...: Գաղտնի ոստիկանը հասկցաւ անոնց մնջկատակին իմաստը:

— Պղտիկ բարեկամներս, ըստ ինքնիրեն, այսպէս կը զանէք թէ պէտք եղածէն աւելի տեսայ և թէ հարկ չէ որ ողջ դուրս ելլեմ քարայրէն: Կը մնայ միայն գիտնալ թէ պիտի թողում որ այդպիսի բան մը ըլլայ...:

Առաջնորդը քիթին տակէն բան մը մրմուաց, մինչ կինը գաղտնի ոստիկանին կը գառնար:

— Այս բարի մարդուն հինգ տոլարնոց թուղթ մը տուի, ըստ դողդոջուն ձայնով մը: Խեղճը բազմանդամ ընտանիք մը ունի զոր պիտի ապրեցնէ...:

Բինքը թիթըն պատասխան անդամ չտուաւ: Ուղղեցաւ դէպ այն արահետը, ուրկէ եկած էր:

Առաջնորդը խսկոյն կանխեց զայն:

— Հոսկէ դ՞ուրս ելլել կ'ուզէք , հարցուց :
 — Անշուշտ , պատասխանեց Բինքէրթըն : Տեսնելիք բաները տեսայ :
 — Այս ատեն թողէք թողէք որ ես առջևէն քալեմ :
 — Սիրով . . . : Եւ արդէն առաջնորդները միշտ զրուաշը ջիկներուն առջևէն կը քալեն , այնպէս չէ :

Մարդը գդուշութեամբ յառաջացաւ , իր ետեւէն ունենալով Բինքէրթընը , որուն ալ կը հետեւէր գեղանի օտարունին : Երեքն ալ , իրենց դէմքը ապառաժին դարձուցած , կ'անցնէին նեղ արահետէն , որուն քով կը մոնչէր անդունդը : Գաղտնի ոստիկանը աչքէ չէր հեռացներ իր երկու ընկերները :

Ճամբուն կէսը յառաջացած էին : Իրենց ետեւ ջուրերը կը փլէին ահեղագոչ :

Առաջնորդը յանկարծ կեցաւ :

Զարամիտ դէմքով մը նայեցաւ Բինքէրթընին : Յետոյ անոր թեւէն բռնեց :

Բայց ուղեորը հաշիւի առած չէր : Գաղտնի ոստիկանը պատի մը պէս տոկուն և զօրաւոր , ցնցումով մը ապահեց ինքինքը : Ենյն պահուն հրազէնի հարուած մը արձակուեցաւ իր ետեւէն : Գնատակը ուուից իր դէմքին խիստ մօար : Օտարուհին էր որ կրակած էր :

Բինքէրթըն կայծակի արագութեամբ ուժգին հարուած մը տուաւ կնոջ թեին , երկրորդ հարուածին մեկնելէն առաջ , և անոր դէնքը գլուրցուց անդունդին խորը : Միենոյն տաեն աջ ձեռքովը բռնեց առաջնորդին դաստակէն : Յետոյ , անոր վրայ ծոելով , ականջէն վար պոռաց թոքերուն բոլոր ոյժով .

— Թշուառակա՞ն , գուն Ալֆրէտ Պուտիի և միւսներուն սպաննիչներուն խումբէն ես : Անօդուտ է ուրանալ : Կը ճանչնամ քեզ :

Առաջնորդը , իբրև պատասխան , կատաղութեան ձիչ մը արձակեց և այնքան ուժգին կերպով զարնուեցաւ Բինքէրթընի որ գաղտնի ոստիկանը քիչ մնաց հաւասարակշութիւնը կորսնցնէր : Միենոյն պահուն օտարուհին ետեւի կողմէն կը բռնէր զինք , յուսալով անշուշտ յորձանքին մէջ գըլտորել զայն :

Բինքէրթըն հասկցաւ որ պէտք չէր ինայել առաջնորդին , եթէ կ'ուզէր փրկուիլ : Շուտով տուաւ իր որոշումը :

Կառուփի զարհուրելի հարուած մը իջեցուց մարդասպանին դլիսուն :

Զարագործը երերաց , անյաջող կերպով փորձեց կառչիլ ոստիկանին թեին և սոսկալի ձիչ մը արձակելով , գլուրեցաւ անդունդին խորը , ուր առ յաւէտ անհետացաւ փրփրադէզ ջուրերուն տակ :

Այս ատեն Բինքէրթըն երկու ձեռքովը վերցուց սարսափահար կինը , և իր առջևէն քշեց զայն վտանգաւոր արահետին վրայ մինչև որ կամուրջը հասնէին : Կինը կը քալէր մեռեալի մը պէս , առանց կամքի , առանց դիմադրութեան :

Երբ ապահովութեան մէջ գանուեցան , կինը սկսաւ դողալ և փորձեց ժպտիլ :

— Թշուառակա՞նը , թովովեց : Չեզ սպաննել կ'ուզէր :

— Օ՛հ , օ՛հ , մտածեց վարպետը , կը տեսնէ՞ք սա խելացին : Կ'ուզէ հաւտացնել թէ օգնեց ինծի : Լաւ , թողունք որ այդպէս ընէ , գոնէ առժամապէս :

Թեր կնոջը տուաւ ու տարաւ զայն պահականոց , ուր իր յայտարարութիւնը ըրաւ :

— Առաջնորդը «Հովերու քարայր»ը տանող ճամբուն վրայ յարձակում գործեց ինծի դէմ , ըստ պաշտօնեալին , ու ես ալ ստիպուեցայ ինքինքս պաշտպանել : Կոխին մէջ այդ թշուառականը գլուրեցի անդունդին խորը :

Գալով գեղանի կնոջ , անիկա յայտարաբեց թէ Մարկօքէննըտի կը կոչուի և հաստատեց գաղտնի ոստիկանին ըստաները , քիչ մը հպարտ երեսովով մը աւելցնելով թէ ամենածանը վտանգի պահուն կրակ ըրած էր առաջնորդին վրայ : Դիբախտաբար վրիպած էր : Այս ատեն ծերունի պարոնին թեւէն բռնած էր , թոյլ չտալու համար որ ինայ : Ասկէ զատ մեծապէս գովեց իր զրօսաշրջիկ ընկերը , խօսելով անոր ըրած հերոսական դիմադրութեան և առաջնորդը անդունդին մէջ գլացրելու ստիպուած ըլլալուն վրայ :

Պահականոցին պաշտօնեաները , որոնք մեծ վստահութիւն մը չունէին այս երկու մարդոց պատմութեան վրայ , լաւ համարեցին մէկը զրկել և կանչել ոստիկանութեան անօրէն ըլթ-

էրար : Այս վերջինը եկաւ , դիւրութեամբ ճանչցաւ Բինքէրթընը իր ծերունի պարոնի տարազին ներքեւ ու հրաւիրեց զայն իր գրասենեակը , իրեն հետ տանելով Մարկօքէննըտին :

Այստեղ նոր հարցաքննութիւն մը կատարուեցաւ : Մինչ-

ոստիկանութեան քննիչը կնոջմով զբաղած էր, զաղանի ոստիկանը պատուհանին մօտեցաւ և տետրակին մէջէն թուղթ մը պատռելով գրեց.

«Հաճեցէք հրամայել որ ինծի թեր կամ դէմ վկայելիք այդ Մարկօ Քէննըտին Նիակարա Թօլու քաղաքէն չմեկնի առանց արտօնութեան և հետեւալէս ենթարկուի ոստիկանական հսկողութեան»:

Այս տոմասկը յանձնել տուաւ ոստիկանապետին, որ անմիջապէս հարկ եղած միջոցները ձեռք առաւ, Խմացուց կնոջ թէ պէտք չէ որ Նիակարա Թօլու մեկնի առանց արտօնություն: Մարկօ բարկացաւ, հաւասարեց թէ ստիպուած էր յաջորդ օրը կանուխ մեկնիլ և սպառնաց որ եթէ բռնի վարդնեն զինքը, իբր հատուցում մեծ դումար մը պիտի պահանջէ իրեն կորսնցնել արուած ժամանակին համար:

— Մի՛ վախնաք, հատուցում պիտի ըլլայ ձեղի, ըստ ոստիկանութեան քննիչը, որ գեղանի օտարուհին հանդէպ գաղանի ոստիկանը կասկածներուն կը մասնակցէր: Ասկէ զատեթէ կը փափաքիք, հաճոյք մը և պարտականութիւն մը պիտի նկատեմ ձեր ծնողքին կամ ձեղի սպասող անձերուն իմացնել և տեղեկութիւն տալ թէ ի՞նչ պատճառներով կը մնաք այս տեղ: Կը հաճի՞ք ըսել թէ Նիակարա Թօլու մեկնելով ո՞ր քաղաքը երթալու մտադրութիւն ունիք:

— Կ'ուղեմ Նիւ Եօրք երթալ...: Կ'ենթադրեմ որ պարտաւոր չեմ ձեզի ըսելու թէ որո՞ւ մօտ և ի՞նչ ընելու կ'երթամ: Բըթկըրս ուսերը թոթուեց:

— Ինչպէս որ կ'ուղէք, ըսաւ: Բայց այդ պարագային չեմ կրնար ձեզի տալ այն գիւրութիւնները, զորս մտադիր էի տալու...: Ո՞ր օթէլը իջած էք:

— Օթէլ աը լա թուռ, պատասխանեց գեղանի Մարկօ, զայրացած և սրանեղած, կ'արդիլում ձեր պաշտօնեաներուն որ գան ու անհանդիստ ընեն զիս:

— Այդ մասին անհոգ եղեք: Նոյնիսկ պիտի չնշմարէք այն հսկողութիւնը, զոր պիտի կաղմակերպեմ: Կարելի եղածին չափ գաղանի պիտի ըլլայ անիկա: Երբ քաղաքէն մեկնիլ ուղէք, պիտի արդիլին ձեզ, ահա այսչափ:

Մարկօ Քէննըտի թակարդի մէջ ինկած կուղքի (գունտուզ) մը պէս կը կատդէք: Նոյն իսկ չհանդարտեցաւ երբ ոստիկանութեան քննիչը, խօսքը ձերունի պարոնին ուղղելով ըստաւ:

— Խարբներնիդ չմնայ, դուք ալ քաղաքէն պիտի չմեկնիքն մինչեւ որ «Հովկերու քարայրին գործը կատարելապէս լուսաբանուի: Զեմ ուղեր ձերբակալել ձեզ, բայց հսկողութիւն կատարել պիտի տամ Քաթարաքթ օթէլին վրայ, ուր իջած էք:

Բինքէրթըն դժգոհ երեսյթ մը առաւ և այսպէս ձեացուց թէ խիստ դժկամակութեամբ կը համակերպի ոստիկանութեան քննիչին հրամանին: Մարկօ մեկնեցաւ ոստիկանատունին: Հազիւ թէ դուրս ելած էր, գաղանի ոստիկանը հաւնեց մօրուքը, կեղծամը և վերարկուն և բնական դէմքը փոխեց գրապանէն հանած ծարիբներու, բրինձափոշիի և կեղծ մազերու միջոցաւ, միենոյն ատեն ի սրտէ խնդալով բարի Ըլթկըրսի զարմացած երեսյթին վրայ:

Վայրկեան մը վերջ փողոցն էր, ծիծաղելի վայելչասէրի մը պէս հագուած և կը հետեւէր գեղանի Մարկոյօ որ իր օթէլը կ'երթար փութկոտ քայլերով:

ՅՈՒԶԵԱԼ ԳԻՇԵՐ ՄԸ

Արդարև Մարկօ Քէննըտի գնաց Օթէլ աը լա թուռ, ուր կ'ըսէր թէ իջած էր: Բինքէրթըն մօտէն կը հետեւէր անոր կրցաւ նշմարել անոր յուղումը և մտահոգութիւնը: Անիկաքանիցս ետև դարձաւ, տեսնելու համար թէ զինքը հետապնդող կա՞ր:

Արդէն ուշադրութիւն չէր ըներ ծիծաղելի վայելչասէրին, որ փողոցին միւս կողմի մայթէն կ'անցնէր և որ բնաւ վըտանգաւոր մէկը չէր թուեր իրեն: Ոստիկանութեան մասին իր ունեցած միսալ ըմբանումով, համոցուած էր թէ իրեն եղած աղդարարութիւնէն վերջ, համագդեստաւոր ոստիկանները պիտի հետապնդեն զինք:

Գաղտնի ոստիկանը տեսաւ անոր Օթէլ աը լա թուռ մտնելը և քանի մը յարկերէն վեր ելլերը: Դնաց կեցաւ կոսրանցիլ դրան մը առջև, օթէլին դէմը: Քանի մը վայրկեան բետք, ոստիկանութեան քննիչ Ըլթկէրսի ամէնէն ճարպիկ լըրտեսներէն երկուք քաղաքային հագուստով եկան միենոյն տեղը և մօտեցան գաղանի ոստիկանին, զոր խկոյն ճանչցան,

իրենց պետին նկարագրութեան համեմատ : Բինքէրթըն անոնց հետ մատաւ կորանցիկ դրան տակ , այսպէս որ կարելի չէր դուրսէն նշմարել անոնց ներկայութիւնը :

Երբ լրտեսներուն պատուիրեց օթէլին երկու կողմերը կենալ և գեղանի Մարկոյի երթեեկութեանց վրայ հոկել , պէտք չէր որ թոյլ տային անոր ո՛ և է պատրուակաւ հեռանոլ Նիակարա Թոլսէն , բայց անիկա կրնար քաղաքին մէջ պտտիլ : Բինքէրթըն ամենախիստ հրահանգներ տուաւ երկու ոստիկաններուն :

— Պէտք չէ որ աչքէ հեռացնէք այդ կինը , ըստ անոնց , դուրս ելլելուն պէս , առանց նշմարուելու պիտի հետապնդէք զայն ո՛ւր որ երթայ և պիտի ջանաք տեղեկութիւնը ըստանալ այն մարդոց վրայ , որոնց հետ խօսիլը կը տեսնէք : Կ'ենթադրեմ թէ այս կերպով քիչ ատենէն պիտի ճանչնամ անոր մեղսակիցները : Գալով ինծի , ես պահ մը կը դառնամ Օթէլ տէ Քաթարաքթ , բայց չուտով պիտի միանամ ձեզի :

Բինքէրթըն կը յուսար իր երկու աշխատակիցներէն լուրեր ստանալ իր օթէլին մէջ , Առտուն կանուխ հեռագրած էր անոնց , պաշտօն տալով Բոլի՝ քննութիւն կատարել Ռոչէսթըրի մէջ Հէնրի Պուտիի մասին և Մօրիսընի՝ տեղեկութիւններ առնել Նիւ Եօրքի մէջ , Ալֆրէտ Պուտիի բարեկամը եղող երկու զբոսաէրներէ , գիտանլու համար թէ սպաննուած երիտասարդը , քաղաքէն մեկնելէ տռաջ , յարաբերութիւն ունեցած էր կնոջ մը հետ :

— Անհոգ եղէք , Մր . Բինքէրթըն , պատասխանեցին երկու գաղտնի ոստիկանները , յարգանքով մաիկ ընելէ ետք իր պատուէրներուն , մեր պարտականութիւնը պիտի կատարենք :

Ողջոնեց զանոնք և դուրս ելաւ : Երբ կորանցիկ դրան սեմէն կ'անցնէր , տեսաւ որ օթէլին համագողեստը հագած երիտասարդ մը դուրս ելաւ այդ շէնքէն և սկսաւ վաղել :

Եաթ Բինքէրթըն չվարանեցաւ անոր ետևէն վաղելու : Երբ փողոցին առաջին անկիւնը դարձան ու այլես օթէլէն ո՛չ ոք կրնար տեսնել զիրենք , գաղտնի ոստիկանը ձայնեց երիտասարդին :

— Էյ , տղաս , վայրկեան մը , պոռաց :

Տղմն կեցաւ և սպասեց Բինքէրթընի :

— Ի՞նչ կ'ուղէք , հարցուց , գրպանը դնելով խնամքով ժալուած թուղթ մը , զոր ձեռքը բռնած էր : Կենալու ժա-

մանակ չունիմ : Թղթատուն կ'երթամ :

— Այո՛ , այո՛ , գիտեմ , ըստ Բինքէրթըն , աչքը քըթթելով : Այն գեղանի Միո Քէննըտիի համար է , որ ձեր օթէլը իջած է , այսպէս չէ :

Ասոր վրայ գաղանի ոստիկանը գրպանէն տոլար մը հանեց և երիտասարդին տուաւ :

— Թո՛ղ որ ակնարկ մը ձգեմ դրկելիք հեռագրիդ վրայ , պղտիկո , ըստ :

Տղան գլուխը երեցուց , պարգևը չուտով անհետացնելէ ետք :

— Ո՛չ , ո՛չ , չեմ կրնար , ըստ : Կինը բացարձակապէս արգիլեց զիս հեռագրին պարունակութիւնը ցոյց տալէ ո՛ և է մէկուն : Ո՛չ իսկ հասցէն , ըստ : Պէտք չէ անոր խօսքը ընեմ ո՛ և է մէկուն :

Նաթ Բինքէրթըն անգամ մը ևս հանեց դրամապանակը :

— Այդ կինը ո՞րչափ տուաւ քեղի գաղտնալահութեանը համար , հարցուց տղուն :

— Տասը տոլար , պատասխանեց երիտասարդը լրրօրէն :

— Է՛ ուրեմն , ես քսան պիտի տամ , ըստ գաղտնի ոստիկանը չոր ձայնով մը և պանքտման մը ցոյց տուաւ :

Տղան ուրախ դէմքով մը տասւ տոմսը և հեռագիրը գաղտնի ոստիկանին երկարեց : Բինքէրթըն թուղթը բացաւ , հաճոյքէն ժպտելով : Հիուագիրը ուղղուած էր Մր . Հէնրի Պուտիի , Ռոչէսթըրը , 13 , 67րդ փողոց և խմբագրուած էր հետեւեալ կերպով .

«Այսօր չեմ կրնար մեկըիլ : Խիստ կարեւոր պատճառներ կ'արգիլեն զիս : Այս գիշեր եկուր» :

Թուղթը ստորագրուած չէր : Բինքէրթըն վերագրձուց զայն երիտասարդին :

— Ա՛ռ , տղա՛ռ , ըստ այս հեռագրին մէջ ինծի համար բան մը չկայ : Տա՞ր հեռագրատուն և մանաւանդ մի՛ ըսեր Միոթէննըտիի թէ ցոյց տուիր ինծի :

— Վտանգ չկայ , պատասխանեց երիտասարդը չարամըտօրէն խնդալով : Կ'ուղէի դեռ հանդիսիլ ձեզի պէս մարդերու , որոնց ցոյց տայի քրա՞ն տղարի փոխարէն :

Ասոր վրայ շարունակեց իր վագքը և Բինքէրթըն դարձաւ Օթէլ ար լա թուռ : Գաղտնի ոստիկանը հիմակ այլ ևս տարակոյս չունէր թէ Զարլէ Պուտիի եղբայրը երիտասարդ

Ալֆրէտի սպանութեան գործին մէջ, յանցաւոր կամ մեղսակից էր:

Հիմա պէտք էր Ռօչէսթըրէն գալէն պատասխանը ձեռք անցընել և ասոր համար Բինքէրթըն պարտաւոր էր յարաբերութեան մտնել օթէլին տիրոջը հետ և հասկցնել անոր: Ուստի ինքինքը ծանօթացուց պանդոկատէրին, որ կացութեան տեղեկանալով, բնականաբար ընդունեց ընել ինչ որ իրմէ կը պահանջէր գաղանի ոստիկանը:

Եւտոյ Նախ Բինքէրթըն ոստիկանապետին գրասենեակը գնաց, ծերունի պարոնի իր ծպումը վերստանալու համար: Մալունելին ետք դարձաւ Օթէլ ար Քաթարաքի, բայց հոն ո՛ և է լուր չգտաւ իր երկու օդնականներէն՝ Բոլէ և Մօրիսոնէ:

Այն ատեն նորէն ծպտեցաւ իրեն կատարեալ պճնամոլ մէ և օթէլին ետեւի մէկ դուռնէն դուրս ելաւ:

Դաղմանի ոստիկանները տակաւին իրենց տեղը կեցած էին, կորանցիկ գրան տակ, Օթէլ ար լա Թուոփ դէմը, իմացուցին գաղանի ոստիկանին թէ Մարկօ Քէննըտի դուրս ելած չէր տակաւին: Քանիցո իր սենեակին պատուհանը բացած և փողոցին աջ ու ձախ կողմը նայած էր: Անշուշտ կ'ուզէր գիտնալ թէ հսկողութիւն կը կատարէին իրեն վրայ:

— Մեր երկուքին ալ ներկայութիւնը չնշմարեց: ըստ անոնցմէ մէկը: Միայն ոստիկան մը, որ իր պառյար կը կատարէր, սարսափելի վախ մը պատճառեց անոր, մինչ խեղճարդը մեղի նայեցաւ ա'նպիսի կասկածու դէմքով մը որ քիչ մնաց քահ քահ պիտի խնդայինք:

Բինքէրթըն ժպտեցաւ և ուսերը թոթուեց: Եւ որովհետեւ այդ պահուն տեսաւ, որ հեռագրատան ցրուիչ մը կը մտնէր Օթէլ ար լա Թուու, անմիջապէս բաժնուեցաւ ոստիկաններէն և օթէլ վազեց:

Դանապանը, իր ստացած մասնաւոր հրահանգներուն համեմատ, հեռագրը առաւ և պանդոկապետին սենեակը տառաւ:

Բինքէրթըն դռնապանին հետ միեւնոյն ատեն մտաւ այդ սենեակը, Եւ երբ պանդոկապետին հետ առանձին մնաց, առաւ հեռագրիրը, որ ուղղուած Միա Մարկօ Քէննըտի, Օթէլ ար լա Թուու, Նիակա Ֆօլս:

Ճարտարօքէն բացաւ զայն ու կարդաց հետեւեալ տողերը.

«Ծառ զարմացած ու սարսափի մատնուած եմ չգալուդ համար: Գիշերուան կառախումքով պիտի գամ ժամը 2-ին: Եթէ կարելի է, կայարան եկուր գտիր զիս: Միւսները հրաւիրեցի Ռինհարթի տունը: Ամէնուն հեռագրեցի»:

Դաղմանի ոստիկանը ամենամեծ զգուշութեամբ գոցեց հեռապիրը: Ոչ ոք պիտի նշմարէր թէ բացուած էր անիկա: Պանդոկապետը յետոյ յանձնեց զայն սպասաւորներէն մէկուն, որ անմիջապէս տարաւ զայն գեղանի օտարուհին սենեակը:

Բինքէրթըն այլևս պէտք չունէր օթէլի առջև կենալու և գիտելու: Հսկողութեան գործը կրնար թողուլ երկու դաղմանի ոստիկաններուն վասնզի, հեռագրիրը կարդալէն ի վեր, կը խորհէր թէ գեղանի Մարկօ գիշերը միայն դուրս պիտի ելլէր օթէլէն, առատուան ժամը 2-ին կայարան գանուելու համար: Դաղմանի ոստիկանը շատ գոհ էր իր անցուցած օրէն: Մանաւանդ վերջին լուրը կ'ուրախացներ զինք: Եթէ Հէնրի Պուտի իմաց տուած էր միւսներուն, ինչպէս հեռագրած էր Մարկոյի, ինք՝ Բինքէրթըն պիտի կրնար մէկ հարուածով մը բռնէլ ամբողջ խումբը

Նախ դնաց գտաւ ոստիկանապետ Բըթկըրսը, որուն պատմեց ինչ որ ըրած և լսած էր մինչեւ այն ատեն: Միայն թէ ոստիկանապետը բնաւ չէր գիտեր Ռինհարթի տունը, որուն խօսքը եղած էր հեռագրին մէջ, և այս մասին թէ հասցէի գիրքերուն մէջ և թէ գործակալներու մօտ կատարուած հետազօտութիւնները ապարդիւն մնացին: Եւ արդէն Նիակարա Ֆօլսի փոքր քաղաքին մէջ Ռինհարթ անունով մէկը չկար:

Ասիկա իսկապէս մեծ կարեւորութիւն մը չունէր գաղտնե ոստիկանին համար: Իրեն կը մնար առատուան ժամը 2-ին կայարան երթալ և գաղտնապէս հետեւիլ Հէնրի Պուտի, որ անշուշտ զինքը պիտի առաջնորդէր ոճրագործներու ժամադրավայրը:

Ժամացոյցը նայեցաւ: Իրիկուան ժամը 7 էր: Դաղմանի ոստիկանը, որ 24 ժամէ ի վեր աչքը գոցած չէր, դարձաւ Օթէլ ար Քաթարաքի, որուն ետեւի մէկ դուռնէն ներս մը տաւ, ինչպէս եղած էր, և փակուեցաւ իր սենեակին մէջ, գոնէ մինչեւ կէս գիշեր ազուրը քուն մը քաշելու համար:

Անկէ առաջ քանի մը վայրկեանի այցելութիւն մը պիտի տար Վեր. Թօպիան Պիքսընի, որուն ծանուցած էր թէ անշուշտ քիչ ատենէն պիտի ձերբակալէր ոճրագործներու ամ-

բողջ խումբը : Հովիւր , այս լուրէն ուրախանալով , անմիջաւ պէս մեկնած էր օթէլէն , իմաց տալու համար Զարլզ Պուրիի :

Բօպիաս Պիքսըն մինչեւ իրիկուան ժամը 11 մնաց միլիոնատէրին մօտ , միսիթարելով խեղճ հայրը , որ միշտ յուսահատ էր : Վերջապէս յաջողեցաւ քիչ մը հանդարտեցնել զայն ու անկէ բաժնուեցաւ այն ատեն միայն երբ Զարլզ Պուտի հաւանեցաւ անկողին մտնել և քիչ մը հանգստանալ :

Ժամը 11 , 30ին միջոցները դարձած էր իր սենեակը , Օթէլ տը Քաթարաքթի մէջ : Քանի մը վայրկեան վեր վար պտտեցաւ , տեղի ունեցած սոսկալի դէպքերուն վրայ մտածելով : Վերջապէս բացաւ անկողնին վերմակը և սկսաւ հանուիլ :

Յանկարծ դուռը բացուեցաւ . . . :

— Զեռքերդ վեր , հրամայեց խուլ ձայն մը :

Պիքսըն ետին դարձաւ սարսափահար : Իր սենեակին դրան առջև կեցած էին երկու հոգի , ատրճանակներով զինուած : Անոնց դէմքը մինչեւ աչքերը ծածկուած էր սեւ թանձրը քօղով մը , ինչպէս նախորդ գիշերուան թշուառականներուն դէմքը և անկարելի էր որոշել անոնց դիմադիծերը :

Ատրճանակները տեսնելով , Վերապատուելին խոկոյն երկու թեւերը վերցուց և անշարժ մնաց , իբր թէ տեղւոյն վըրայ դամուած ըլլար :

Երբ մարդիկը ներս մտան : Անոնց հետեւեցաւ երրորդ մը , որ հովիւրն հրամայեց ձեռքերը վար առնել և կրնակը տանիլ : Սյդ դիրքին մէջ կապեցին զինք , բերանը կապ դրին և տարին բակը , ուր տկար լոյս մը միայն կը վարէր և ուր Բօպիաս սարսափով տեսաւ գոնապանին մարմինը , արեան ընկոյտի մը մէջ տարածուած : Տարարախտ մարդը սպաննուած էր դաշունահար :

Նոր Բինքմթըն ևս նրբանցքին մէջ կը գտնուէր , նմանապէս դիմակաւոր երեք մարդերէ շրջապատուած : Ան ալ Բօպիասի պէս կաշկանդուած և բերանը կապուած էր :

Թշուարականները բռնած էին զայն առաջին քունին մէջ , որ այնքան ծանր կ'ըլլայ յողնած մարդոց քով : Դլիսին վրայ ատրճանակի բունի ուժգին հարուած մը սասցած ըլլալով , աչքերը հազիւ թէ բացած և անմիջապէս ինքը դիտակցութիւնը կորսնցուցած էր : Զարագործները իսկոյն կաշկանդած էին զայն : Նախ և առաջ խիստ զարմացած էին իրենց դէմքը

չգտնելով տարիքէն կորաքամակ եղած և ճերմակ մօրուքով այն մարդը , զոր կը վնատէին : Բայց սենեակին մէջ խուզարկութիւն մը կատարելով գտան կեղծ առարկաներ և ծորիրներ , զորս կը գործածէր գաղանի ոստիկանը : Զարագործները հասկցան թէ որո՛ւ հետ էր իրենց գործը :

Երբ Բինքէրթըն սթափեցաւ , տեսաւ որ կաշկանդուած և բերանը կապուած էր ու կը գտնուէր նրբանցքին մէջ , ուր գետինը փուռուած էր օթէլին դռնապանը :

— Կը տեսնէ՞ք սա մարդը , ըստաւ չարագործներէն մէկը կատաղօրէն , դիակը ցոյց տալո՞յ : Զեզ ալ կրնայինք դաշունահար սպաննել , բայց ասիկա շատ մեղմ պիտի ըլլար ձեզի համար : Երկուքդ ալ մեր գաղտնիքներուն տեղեկացաք : Դուն աղետարե՛ր լրտես , նոյն իսկ ջուրը նետեցիր առաջնորդ Հըպարքարդ լրտես , որ մեր լաւ ընկերներէն մէկն էր : Հոգ մի՛ընէք , գառնուկնե՛րս , սպաննուելէ առաջ աղւոր չարչարանքներու պիտի ենթարկուիր :

Երկու մարդիկը վար իջեցուեցան , դիմակաւոր վեց աւազակներէ շրջապատուած : Ոչ մէկ տեղ մարդ մարդասանք չէր տեսնուէր : Խումբը դէպի լեռ ուղղուեցաւ :

Զարագործները զգուշացան հոսանքն ի վար երթալէ : Գիտէին թէ այդ կողմը խիստ հսկողութիւն ի գործ կը գըրուէր Բայց վերի կողմը , հոն ուր ջուրի անկումները կ'սկսէին , պահակ չկար թշուառականները հարկ եղած պատրաստութիւնը տեսած էին արդէն , իրենց զօները սպաննելու համար :

Ոճրագործները խոհեմութեամբ իջան գետին երկանքէն , բուն հոսանքներուն ներքեւ : Հոն կապած էին ծանր տակառ մը , որ կիսովին միլրճուած էր ջուրին մէջ և անզուապ ալիքներուն վրայ իր հաւասարակշուութիւնը պահած էր քարերու կշուութով մը :

Նախ Բինքէրթըն և Բօպիածիքսըն այդ եղական նաւակին մէջ հրուեցան թշուառականներուն կողմէ որոնց եղերքէն կապուղ շղթաները քակեցին :

— Բարի ճամբորդութիւն և յաջող հով , պոռաց ծաղածու ձայն մը , տեսնելով տակառին անհետանալը գետին յործանուտ ջուրերուն մէջ : Այլ ևս մարդ պիտի չչմանէք , չո՛ւն լրտեսներ ձեզի :

Բինքէրթըն նախ փորձեց զինքը սեղմող կապերէն աղատի : Քիչ մը ետք յաջողեցաւ , ձեռքերուն հանգուցները քըր-

սելով առակառին խորը լեցուած քարերուն։ Յետոյ հանեց բեռնին կապը, որ հեղձաման կ'ընէր զինք և աղատեց նաև իր տարարախտ ընկերը։

Տակառը ինք իր վրայ կը դառնար կատաղօրէն և ամէն վայրկան կ'սպանար շրջիլ։ Բայց գաղտնի ոստիկանը, միշտ ուշադրութեամբ քննելով նաւակին ամենափոքր չարժումը, իսկոյն կը նետուէր ծրած կողմին դիմացի կողմը ու այսպէս կը յաջողէր խուսափիլ նաւարեկութենէն։

Ամենահզօր տէ՛ր, կորսուած ենք, մրմուց թօպիա Տիքսըն։

Խեղճ հովիւր իր բոլոր անդամներովը կը դողար։

Բարերախտաբար գեղեցիկ լիալուսին մը կար և գետին մակերեսը հիանալի կերպով լուսաւորուած էր։ Երկու մարդոց ետեւ կը մոնչէն հոկայական զանգուածները ջուրի հոսանքներուն, որոնց որոտալի աղմուկը կ'աւելցնէ թօպիաի զգացած սարսափիը։

Զարհուրանքի մատնուած և աւելի մեռեալ քան թէ ողջ անիկա անիծեալ նաւակին եղերքներուն կը կառէր, մինչ նաթ Բինքէրթըն, սովորականին պէս հանդարտ և պաղարիւն մահը խաբելու միջոցները կը փնտոեր։

Գաղտնի ոստիկանը վայրկեան մը չկորսնցուց իր մոքի ներկայութիւնը, նոյն իսկ երբ փրփրադէղ ալիքները, կիսուլին լեցնելով տակառը, կ'սպառնային բոլորովին ընկլուզել զայն։ Վերապատուելին կ'աղօթէր և կը հեծէր

— Լողալ գիտէ՞ք, ըստ յանկարծ Բինքէրթըն։

— Է՛ ուրեմն, սիրտերնիդ ամուր բռնեցէք։ Եթէ մինչեւ եղերք լողալու առիթ մը դանեմ, տակառը պիտի երեցնեմ։ Ուրիշ միջոց չունինք ինքզինքնիս աղատելու, վասնզի յորձանքներուն մէջ հասնենուս պէս, անզրէպ կերպով պիտի կորսուինք։

Այդ պահուն, որպէս թէ գաղանի ոստիկանին իրաւունք տալու համար, հակահոսանք մը բռնեց տակառը, քանի մը անդամ վեր հանեց ու վար իջեցուց և ուժգնորէն քշեց զայն մինչեւ գետին ձախ եղերքին մօտ։

Գաղտնի ոստիկանը տակառին մէկ կողմին վրայ նետուած էր։

— Ուշադրութիւն, Տիքսըն, պուաց, Հիմա պէտք է լողալ կեանքերնիս փրկելու համար։

Տակառը միսրճուելով, սոսկալի, հերոսական պայքար մը սկսան ալիքներու դէմ։ Գաղտնի ոստիկանը քանի մը վայրկեանի մէջ յաջողեցաւ եղերք հասնիլ և վեր ելեկ, տակառին շրջած տեղէն բաւական հեռու։

Ետին դարձաւ ու գոհութեամբ տեսաւ թէ Բիքսըն ալ եղերք հասած էր։ Բայց Բինքէրթըն հիմակուհիմա ժամանակ շունէր իր ընկերոջմով զբաղելու։

Ժամացոյցը հանեց որ կեցած էր ճիշդ այն պահուն, ուր ինք ջուր նետուած էր։ Ժամը 1ին քանի մը վայրկեան կար։ Ուրեմն հիմա 1ը քիչ մը անցած ըլլալու էր։ Աճապարելով, ճիշդ ժամանակին պիտի հասնէր հետապնդելու համար Հէնրի Պուտին, որ ժամը 2ին պիտի իջնէր կառախումբէն։

Գաղտնի ոստիկանը սկսաւ վազել, որպէս թէ բոլոր ոստիկանները զինքը կը հալածէն։

Կեդրոնական կայարան հասաւ, ժամը 2ին մէկ վայրկեան մնացած։

Կայարանին մօտերը կեցող ոստիկանի մը դիմեց չնջառապառ, ինքզինքը ծանօթացուց, գաղտնի ոստիկանի մետալը ցուցնելով եւ իր հրահանգները տուաւ անոր։

— Անմիջապէս զացէք ոստիկանութեան կեդրոնական գրասենեալը և ըսէք ոստիկանապետ Բըթկըրսի որ իսկոյն պատիկան զրկէ ինծի։ Հոսկէ մինչեւ այն տեղը, ուր տասը ոստիկան զրկէ ինծի։ Հոսկէ մինչեւ այդ առաջնորդէ զիս իմ հետապնդումն, հողին վրայ արիւնի հետքեր պիտի ձգեմ։ Միանգամ ընդմիշտ պէտք է լմնըընել աւազակներու այս խումբին գործը։

Ոստիկանը ողջունեց և վազելով մեկնեցաւ, Բինքէրթըն, որուն զգեստները չորցած էին մէկ ժամուան խելայել վազեքին միջոցին, կայարանին մեծ բակին մէջ, սիւնի մը ետեւ պահութեացաւ։ Ճիշդ այդ պահուն կայարան կը մտնէր Բօշէսթըրէն եկող կառախումբը։

Բակին միւս ծայրը, գաղտնի ոստիկանը նշմարեց Մարկօֆէնը բարեմատին։ Բայց գաղտնի ոստիկաններէն ո՛չ մէկը տեսաւ։ Վարպետ կինը յաջողած էր խուսափիլ անոնց հսկողութենէն և առանց նշմարուելու դուրս ելած էր օթէլէն։

Այդ պահուն Մարկօֆէնէր անհամակրելի դէմքով ծերուկ մը, որ թերւը տուաւ իրեն ու միասին դուրս ելան կայարանէն։

— Այս մարդը ապահովապէս Հէնրի Պուտին է, ըստ

ինքնիրեն գաղտնի ոստիկանը, որուն ենթադրութիւնը հաստատուեցաւ, երբ լսեց որ Մարկօ կ'ըսէր ծերունիին.

— Կտորք նստելու պէտք չունինք, Հէնրի: Տունը շատ մօտ է:

— Աւելի՛ աղէկ, մտածեց Բինքէրթըն, որ սկսաւ իր հետապնդումին:

Չմելին հանեց, ձեռքը արիւնեց և կրցաւ արեան կաթիւներ հոսեցնել ճամբուն երկայնքը, որպէսզի իր ետեւէն դալիք ոստիկանները առաջնորդուին:

Հէնրի և Մարկօ Աւոլնը իշլընիւ գացին, առաջին յարկի պատուհանները լուսաւորուած մանաւոր սիրուն տան մը դրան երեք հարուած զարկին և դուռը բացուելուն պէս ներս մտան: Բինքէրթըն քանի մը վայրկեան սպասեց և ինք ալ երեք հարուած զարկաւ: Խափչիկ մը եկաւ գաղտնի ոստիկանը լախտի հարուած մը իջեցուց անոր գլխին, կաշկանդեց զայն և բերանակապ անցուց: Յետոյ առաջին յարկը ելաւ մեղմիւ, տան դուռը կիսարաց ձգելով:

Սեսեակի մը դրան ետեւ լսեց ուրախութեան և յաղթանակի վայրագ ճիչեր: Ականջը փականքին ծակին վրայ դրաւ:

— Այլ եւս վախնալու բան բան չկայ, կը պոռար գիշովի ճայն մը: Հովիւը և լրտեսը նիսկարայի խորն են: Այժմ կընանք ամենայն ապահովութեամբ շարունակել մեր դործը:

Այս միջոցին Նաթ Բինքէրթըն, որ լսած էր ոստիկաններուն գալը, ուժգնորէն բացաւ դուռը և կեցաւ ոեմին վրայ այն սեսեակին, ուր թշուարականները արդէն իսկ սկսած էին կերուխումի:

— Ձեռքերնիդ վե՛ր, պոռաց որոտագին ճայնով մը: Բինքէրթըն նիսկարայի խորը չէ:


Սհոելի ճայներ պատասխանեցին իրեն: Զարագործները սարսափով կը նայէին այն մարդուն, զոր սպաննուած ըլլալ կը կարծէին: Աստիկանները վաղելով կուգային: Սոսկալի կոիւ մը տեղի ունեցաւ անոնց և անեցիներու միջեւ: Այս կոիւը վերջացաւ աւազակներու պարտութեամբ: Անոնց մէկ քանին վիրաւորուեցան՝ և երկուքը սպաննուեցան:

Հէնրի Պուտի սպասած չէր որ բռնեն զինք: Ատրճանակը հանած և անձնասպան եղած էր, ստորնացուցիչ դատա-

դարտութեան մը անպարտութենէն խուսափելու համար: Աւելի ետքը, Մարկօ Քէնըտիի հարցաքննութեամբ, իմացուեցաւ թէ այդ ազգիկը, որ Հէնրի Պուտի սիրուհին էր, իր պշտանքներով գրաւած էր երիտասարպ Ալֆրէտի ուշադրութիւնը և հրաւիրած էր զայն նիսկարայի ջրվէժը պաոյտի գալու, որպէսզի սպաննել տայ զայն խումբ մը չարագործներու, որոնց արհեստն էր դրամի փոխարէն սպաննել իրը վտանգաւոր կամ նեղութիւն պատճառող նկատուած և իրենց ցոյց արուած անձերը: Արդ, քանի մը տարիէ ի վեր Հէնրի Պուտի հարստութիւնը չատ նուազած էր: Անիկա նոյն իսկ կը նախատեսէր այն վայրկեանը, ուր իր կործանումը կատարեալ պիտի ըլլար: Եւ ասոր համար սպաննել տալ ժառանգորդը իր եղմօր, որպէսզի օր մը ձեռք բերէ անոր միլիոնները:

Այդ թշուառականներուն մեծ մասը մահուն դատապարտուեցան և գլխատուեցան: Միւսները երկարամեայ դիսպարտութեան պատիմներ կրեցին:

Զարլզ Պուտի, որ յուսահատած էր, ստիպուած ըլլալուն խոստվանիլ թէ իր եղրայրը ամենայոսի տեսակէն ոճրագործ մըն էր, խորապէս երախտապարտ եղաւ իր զաւկին սպաննիշները երեւան հանող զաղտնի ոստիկանին, զոր վարձատրեց իշխանաբար: Միլիսնատէրը համոզուած էր թէ իր եղրայրը զինքն ալ սպաննել պիտի տար: Ամէն պարագայի մէջ, թշուառական Հէնրի Պուտի գիտցած էր այնքան ճարտար և խորամանկ կերպով գործել որ ո՛չ Բէռիէ Բօչէսթրի և ոչ Մօրիսն նիւ Եօրքի մէջ աննպաստ տեղեկութիւն մը չէին կրցած ստանալ անոր դէմ, հակառակ իրենց կատարած խիստ գործօն հետազօտութիւններուն:



Արդին լոյս տեսած են

Նաթ Թինքերթօն	1—17	թիւ	համը	10	Դր.
Նիք Քարթըր	1—10	»	»	20	»
Արսէն Լիւրէն	1 - 5	»	»	10	»
Շէրլօք Հօլմո	1—4	»	»	10	»
Ջիկօմար				50	»
Միլիոններու գաղտնիքը				75	»
Կեդրոնատեղի՝ ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ					
Պատ Ալի Ռէշիւ էֆ. խան					

Յաջորդով՝ (19) ՆԱԹ ԹԻՆՔԵՐԹԸՆԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ

910



NL1007227 7



NL1007226 6



NL1007225 5



NL1007224 4



NL1007223 3



NL1007017 2




NL0933053 1



NL1007234 14



NL1007233 13



NL1007232 12



NL1007231 11



NL1007230 10



NL1007229 9



NL1007228 8



NL1007241 21



NL1007240 20



NL1007239 19




NL1007238 18



NL1007237 17



NL1007236 16



NL1007235 15

